զօրէնս և զհաւատս մեր ջնջել. ուստի . . . ժողովեա՛ զամենայն եպիսկոպոսունսդ Հայոց աշխարհի, որ յԱղուանան են, և ի բանակ այսր հասիր։ Զոր և արար կաթուղիկոսն. երկերիւր եպիսկոպոսօք գնայր Տէր Յովսէփ ի բանակն Քրիստոնէից։ Եկին ի բանակն և վարդապետք և քահանայք և սարկաւագունք Աղուանից և ամենայն բազմութիւն ժողովրդեան։

. . . Եւ յայնժամ կարդադրեցաւ, զի ամենայն հոգեւորական Խաչ և Աւետարան առցեն ի ձեռն։ Եւ յայնժամ ամենայն բանակն Խաչ և Աւետարան դարձան։ Ապուսուար այն ինչ դայր ի վերայ Քրիստոնէից. Դաւիթ քսան հազարաւ հասանէր ի վերայ այլազգեաց. իբրեւ ճակատ զճակատ հարան. ձայն բարձին քահանայական դասքն միաբան և ասին, "Արի՛ Տէր, օգնեա՛ մեզ և փրկեա՛ զմեզ վասն անուան Քոյ"։ Եւ յասելն բանիս՝ զօրքն Քրիստոնէից յարձակեցան ի վերայ Պարսից և հարին սատակեցին զօրս նոցա և զմնացեալսն ի փախուստ դարձուցին ահագին կոտորածով, մինչեւ արեամբ ներկեցին դաշտս և զլերինս։ Առին անթիւ գանձս ոսկւոյ և արծաթոյ, և աւուրս հինգ ուր և հասին, կոտորեցին զայլազգիսն. իսկ մընացեալքն մերկ և բոկոտն մազապուրծ փախեան յաշխարհն իւրեանց։

Յետ այսր ամի՝ Դաւիթ պարգեւօք արձակեաց զկաթուղիկոսն և զեպիսկոպոսունս և զայլսն ամենայն յիւրեանց տեղիս՝ փառս տալով Աստուծոյ։

278,279) Յոդ. ՃԻԳ. «Աղուանից հայրապետք մինչեւ ցայսօր նստէին ի քաղաքն հայոց Պարտաւ, որ ասի Փայտակարան. սահմանակից համատարած ծովուն (Կասպից)։ Եւ եղեւ ի զօրանալն Պարսից՝ փոխեցաւ աթոռ հայրապետութեան ի Գանձակ, որք հանդիպեցան այսմ մատենագրութեանս մերում կաթուղիկոսք Աղուանից՝ Տէր Յովհաննէս, և Տէր Գէորգ, Տէր Յովսէփ, Տէր Մարկոս եւ Տէր Ստեփաննոս, իսկ թագաւորք Աղուանից՝ Գագիկ և Դաւիթ և Կորիկէ, որք նստէին այժմուս ի Լօռէ ք աղաք Հայոց։ Էին և այլ թագաւորք Հայոց ի Դարբանդ աշխարհին՝ որ ասի Կասպանք, սահմանակից Աղուանից, որք էին թագաւորք անարատք եւ սրբակրօնք, որ